Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3403

2190

1651

# ՀԱՄԱՌՕՏ
## ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
## ԵՐԿՈՒՑ ԲԱՐԵՐԱՐԱՑ ՋՈՒՂԱՅՑՈՒ

Տեառն Մարտիրոսի Յ. Յարութիւնեան

ԵՒ

Պարոն Մանուկեայ Յովհաննէսեան

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Գաւազար Տէր Գ. Գաւազարեան

Ի ՋՈՒՂԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ
ՍՈՒՐԲ ՎԱՆԱՑ
1883

12.
88

3403

# ՀՈՄԵՐՈՍ

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԵՐԿՈՒՑ ԲԱՐԵՐԱՐԱՑ ՋՈՒՂԱՅՈՒ

Տէրէն Մարքոսի Յ. Յարութիւնեան

ԵՒ

Պարոն Մանուչայ Յորդանանեան

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Ղազար Տէր Ղ. Ղազարեան

Ի ՋՈՒՂԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՍՈՒՐԲ ՎԱՆԱՑ

1883

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

## Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ. ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵ. ՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Բ. ՍՐԲԱԶԱՆ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋ. ՆՈՐԴԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՍՐԲՈՅ ՎԱՆԱՑ

## ԱԶԴ

Հոգաբարձութեան Տպարանի Ամենափրկչեան սրբոյ Վանացս [illegible] կենսագրութեանս [illegible] 'ի Բնագրոյ աշխատասիրեալ յօդուածաբար Հեղինակէն՝ որք են Բարերարացն Նոր Ջուղայու, և մանաւանդ լինելով մեծ ազգային բարեյիշատակ Հանգուցեալ Պարոն Մանուկ Որդանեան Հայրենասէր անձն՝ յապաւ երախտաւոր Տպարանիս գնելով և առաքելով զՏպագրական մամուլս և [illegible] Բ. Սրբազնութեան Տեառն Գրիգորիս Արքեպիսկոպոսի Առաջնորդի սրբոյ Վանացս առաւել համաձայն հաճութեամբ 'ի լոյս ընծայեցաւ ծախս 'ի Տպարանիս ։

## Կենսագրութիւն Տիկին Մարիամու Յոհնի Յարութիւնեան և Օրիորդ Թագուհւոյ Մանուկեան երկուց երջանիկ յիշատակի հարազատ քերց ։

Ընդստին 'ի սկզբան ութ և տասներորդ դարուն 'ի գաղթել Հայոց 'ի կղզին Ջաւա՝ պարապէր անդ խաղաղաւէտ 'ի պաճարանս տուր և առիկ շահավաճառութեան աղա Գէորգ Մանուկ Մանիչարեանց, նոյնպէս և եղբայր նորա Մելքում Մանուկեան նշանաւոր և մեծապատիւ հանդիսանայր 'ի Բենգալ ։

Աղա Գէորգ Մանուկ Մանիչարեանց ըստ յաջող հանգամանաց ժամանակին կուտեաց ճոխութիւնս իշխանականս, և եղև ականաւոր ոք և մեծարոյ յաչս Հոլանտական պետութեան ։ Սոցա էին քորք երկու Մարիամ և Թագուհի որք բնակէին 'ի Նոր Ջուղա յԱսպահան 'ի Պարսս, սերունդք աղքատ բայց պատուելի ծնողաց, և ըստ որում որբացեալ էին 'ի մանկութենէ, և չունէին խնամակալ զոք անդ, ուստի եղբայր նոցա Գէորգ Մանուկեան 'ի 1795 ամի եբեր զնոսա արտաքս անտի 'ի Հնդիկս և

ընակեցոյց զնոսա առ ժամանակ մի 'ի Մադրաս։ Ի մեկնել նոցա 'ի հայրենի տանէն, Մարիամ էր 'ի հասակի 14 ամաց, և Թագուհի 'ի 10 ամաց հասակի։ Զկնի քանի մի ամաց ամուսնացաւ Մարիամ ընդ արդոյ Յակոբայ Յարութիւնեան, որ և յետոյ առեալ զամուսին իւր զՄարիամ ընդ քեռնորա Թագուհւոյ եկն 'ի Ջաւա առ Աղա Գէորգ Մանուկեան։

Սա յայնժամ առաւել մեծապատիւ հանդիսանայր անդ վաճառաշահութեամբ, ազգասիրութեամբ, և առատաձեռնութեամբ 'ի բազում կարևոր դէպս, օժանդակիչ հանդիսանայր ազգային հաստատութեանց, յառաջացուցիչ բազմաթիւ առանձնաւորաց, ձեռնտու դրամական փոխատուութեամբ հոլանդական պետութեան, և 'ի յաղթական պսակ իւրոց բարեմասնութեանց մնադիր էր բանալ զազգային համալսարան 'ի Լոնտոն, բայց կանխահաս մահն 'ի դերև հանեալ զվսեմական խորհրդոցն նորին կատարումն, կարձեաց 'ի կենաց զազգասէրն Գէորգ 'ի 1827 ամի։

Մեծափարթամ մասին ճոխութեանց իւրոց եթող նա ժառանգ զհարազատ քորս իւր համեստափայլ Տիկին Մարիամ և շնո-



հազարդ Օրիորդ Թագուհի։ Սովին ժառանգութեամբ ամոլքն երկոքին մեծամեծս գործեցին։ Սոքա թէ գործոլք թէ բանիւք և թէ արդեամբք պարծանք են համարէն հնդկաբնակ ազգայնոց, քան զորս մեծագոյն ըստ ազգասիրութեան և ըստ պէս-պէս բարեմասնութեանց պերճ հանդիսից թերևս ոչ ոք եկաց 'ի կղզին Ջաւա 'ի-հնդիկս։ Ի դարման կրօնից և ուսմանց և կարեաց քաղցր էր նոցա յաճախ բաշխել անխտիր արքայօրէն գանձ առատաձիր։ Կարեկցութիւն նոցա։ Գութ և խնամ ցուցեալ առ կարօտաւորս, առ տնանկս և առ պանդուխտս անցանէր զանցանէր քան ըզչափս, տուն նոցա ապաւէն աղքատաց և որբարան աղքատութեան։ Հայրենասիրութիւն նոցա։ Զհայրենասիրութեան նոցա մարթիմաստանօր յայտ ածել զառաւելութիւն, այլ զչափ նորա ոչ բնաւ։ Թէպէտ և յանտիական հասակի լքեալ էին զտեղի ծննդեան իւրեանց, այլ այնպէս զօրաւոր և ջերմ էին զգացմունք նոցա առ նոյն տեղի, զի երբէք երբէք 'ի լսել նոցա զթշուառ վիճակէ համազգեաց իւրեանց անդ, շիթս արտասուաց յորդաբուխս հեղուին յաչաց։ Բազումք յեկեղեցեաց նոր Ջուղայու առա-

տաձիր Նպաստիւք սոցա զնախկին իւրեանց զվայելչութիւն զգեցան և շուք, Նշանաւորն 'ի Հրաշակերտս Նոցա եղև. կառուցումն կրկին ազգային ուսումնարանաց, մին՝ 'ի Նոր Ջուղա, և միւսն 'ի Ջաւա, մին՝ 'ի մշտայուշ յիշատակ Հայրենասիրութեան և միւսն 'ի յարատևութիւն Հայկական բարքառոյն 'ի գաղութս աստ 'ի Ջաւա: Դպրոցն որ 'ի Ջաւա կառուցաւ 'ի Նոցանէ 'ի 1855 ամի, Հաստատուն արդիւնք որոյ ելանեն 'ի չորեքին անշարժ կալուածոց գնելոց 'ի Նոցանէ յանուն Նոյն դպրոցին:

ՅաՀախ յարտասուս փղձկէին 'ի լսելն թէ տունն՝ քաղցր բնակարանն, յորում մնալ և զարգացեալ էին ինքեանք 'ի տիս մանկութեան, անկեալ էր 'ի ձեռս մահմետականաց: Ցաւ մեծ էր Նոցա ընդ այս, որ վասն երկիցս առաքեցին դրամ 'ի Նոր Ջուղա 'ի գնել զայն տուն և ընծայել 'ի պարգև Եկեղեցւոյ Թաղին:

Հոգեւոյս Թադդէոս բազմարդիւն Եպիսկոպոսն որ 'ի հեռուստ անտի Նշմարէր հոգւոյ աչօք զնոցին գովանի առատաձեռնութեան շնորհ, և ազգասիրութեան պերճ և սխրալի հանդէս, 'ի տեսանելն զպատկեր Մարիամու Տիկնոջ, յուրախութենէ սրտին գոչեաց ասելով "ուստի է ինձ այս, զի մայր տեառն իմոյ եկեսցէ առիս,,

Ուսումնասիրութիւն Նոցա: Ըստ չափու կրթութեան իւրեանց դրուատից է արժանաւոր, զի թէ և չէին կրթեալ 'ի բարձրագոյն հրահանգս ուսմանց, այլ ջանիւք և եթ իւրեանց գիտէին զպարզ ընթերցումն սուրբ գրոց և զնոցին բացատրութիւն: Բաժանորդք լինէին պէսպէս ազգային լրագրոց ոչ թէ այնչափ քաղաքականութեանց աշխարհաց և հանգամանաց Նոցին և պէսպէս լրոց լեցին տեղեակք, որչափ յաւէտ քաջալերս տալոյ տպագրողաց և օրինակ բարի այլոց համազգեաց: Բազմաց մատենից 'ի լոյս եկելոց 'ի կողմանս Հնդկաստանի, Նոր Մեկենաս հանդիսացեալ առատաձիր Նպաստիւք 'ի հրատարակումն փութացուցին:

Երգնասիրութիւն Նոցա: Բարեպաշտոն վարէին կենցաղ: Սիրելի էր Նոցա յամենայն կիւրակէի հանդիսակից գոլ պաշտամանց սուրբ Եկեղեցւոյն և զայլս յորդորել կանխել 'ի Նոյն: Ջծէս և զկանոնս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ պատուէին յօժարակամ և սրտի մտօք, և թէ որքան բարեպաշտական հոգւով և երկիւղածու-

թեամբ սրբոյ Աւետարանական խրատուց լինէին ուսնկնդիրք և կատարիչք, յանհնարիցն է ինձ 'ի բան բերել։ Եկեղեցին Հայոց 'ի Բատաւիա կառուցաւ 'ի 1854 ամի յանուն սուրբ Յովհաննու՝ ձեռնտուութեամբ երկուց արժանապատիւ հարազատ քերցն. որք և յետոյ ընծայեցին նմա 'ի պարգև զհոյակապ տուն իւրեանց, որոյ արդեամբք վճարին ամենայն ծախք եկեղեցւոյն։

Հուսկ ուրեմն երջանիկ յիշատակի հարազատ երկոքին քորքն մանաւորապէս արժանանան խորին երախտագիտութեան համայն ջաւարնակ ազգայնոց 'ի մասին բազմապիսի օժանդակութեանց իւրեանց 'ի յոլով կարևոր ազգային դէպս։

Ի հաստատել 'ի ձեռն ազգասիրական հանգանակութեան հայոց 'ի Ջաւա "զՀայկեան Միաբանութեան,, մեծագումար և առատաձիր հանգանակողք եղեն 'ի նմին քորքն երկոքին, տեսանելով զի նպատակ միաբանութեան էր 'ի խնամել զհայ կարօտաւորս 'ի Ջաւա, և զչքաւորս և զորբ հայ մանկունս ձգել արդեամբք նորին 'ի վարժոց։ Նոյնպէս և առատ հանգանակողք եղեն Սնդկի աղքատաց նոր Ջուղայու հաստատեալ 'ի 1858 ամի։



Թագուհի Մանուկեան շնորհազարդ Օրիորդն ոչ եմուտ ընդ օրինօք ամուսնական կենաց, այլ զկուսութեան իւրոյ զանթառամ ծաղիկ հանգոյն Աստղական ընծայելոյ 'ի գրգարանն Եդեմական նուիրեաց երկնից։ Վախճանեաց նա զկեանս իւր 'ի 1857 թուականի 'ի հասակի 72 ամաց։

Իսկ Մարիամ յետ բազմապիսի այլ և այլ վեհանձն հանդիսից յազգային իրողութիւնս վախճանի 'ի 1864 ամի 'ի հասակի 83 ամաց, թողլով զիւր մնացեալ գոյս 'ի պարգև ազգային եկեղեցւոյն տեղւոյս։ Կառուցեալ կայ նմա արձան մարմարեայ 'ի հիւսիսային կողման սուրբ Յովհաննու եկեղեցւոյն Բատաւիոյ, որ և վկայ է լռելեան և եթ ազնուագութ առատութեան նորա և բարեկրօն լաւութեանց, սակայն անջնջելի կանգնեալ կայ նմա արձան և յիշատակարան 'ի սիրտ և 'ի հոգի համազգեաց մերոց աստ, որք երախտագիտական զգացմամբ 'ի գոհ և 'ի գով շրթունս յաճախ յիշատակեն զանուն նորա և զգործ։

ՎԵՐՋ

### Համառօտ կենսագրութիւն Պարոն Մանուկայ Յորդանանեան ։

Նորն Ջուղա, որ պարծանս խանձարրոց բազում ոչ աննշան հայրենասիրաց ունի ինքեան պահեալ, ոչ ինչ ընդհատ պարծի նա և գոլ ծննդավայր և առնս մեծի հայրենասիրի, Պարոն Մանուկայ Յորդանանեան՝ սերեալ 'ի Փարսադանեանց ազգատոհմէ ։ Ծնողք նորա չէին 'ի յաջող վիճակի, այլ աղքատիկ վարէին կենցաղ, և Մանուկ որդի նոցա մինչև յարբունս հասակի եկաց առ նոսա օգնական գոլով հօրն յոստայնանկութեան արհեստին ։ Յութուտասնամենի եղանէ 'ի հայրենեաց 'ի պանդխտութիւն 'ի կողմանս Ջաւայ, ուր երջանիկ յիշատակի Աղա Գէորգ Մ. Մանիչարեանց, մեծանուն վաճառականն ընդունի զնա 'ի ներքոյ իւրոյ խնամակալութեան, և կրթէ զնա անմիջապէս 'ի տուր և առս ։ Զկնի հինգ ամաց հմտացեալ նորա պէսպէս պարագայից վաճառաշահութեան, խնդրանօք թոյլտուութիւն աղերսէ 'ի բազմերախտ խնամակալուէ իւրմէ զբաղիլ յա-



ռանձին տուր և առս, որ և յաջողէր նմին ։ Ուստի 'ի 1824 ամի եղանէ 'ի Սուրբայիա քաղաք ուր զկնի յոլովից բազմավիշտ ամաց, իւրով արդար քրտնահոս վաստակօք 'ի ձեռս բերէ բաւական ճոխութիւնս ։ Գնէ 'ի 1835 ամի զգործատուն շաքարանոցի միոյ, որ 'ի սկզբան բերէր բաւական արդիւնս ։ Ի 1841 ամի հիւանդացեալ նորա, պարտաւորի եղանել յուղևորութիւն յեւրոպէ խորհրդեամբ բժշկաց ։ Անդանօր շրջագայեալ նորա հանդիպի տեսութեան բազմերախտ Հարց Մխիթարեան ուխտի 'ի Վենետիկ, ցուցանէ անդ զեռանդ և իղձ ուսումնասիրութեան, և կրթի ըստ կարևորին առ ոտս գիտնական Հ. Ղևոնդ Ալիշան վարդապետի ։ Ուղևորեալ նորա ապա յայլ հռչակաւոր քաղաքս Եւրոպայ, վերադառնայ 'ի Ջաւա զկնի տասն ամաց բացակայութեան, և ժամանակ մի մնացեալ 'ի Սուրբայիա, գայ և կալնու զբնակութիւն իւր 'ի Բատաւիա ։ Ո՛չ եմուտ ընդ օրինօք ամուսնական կենաց ։ Եւ 'ի հասակի ալեզարդ ծերութեանն՝ ընտրեալ նորա զսակաւապէտ անպաճոյճ կեանս, առանձնացաւ պարապեալ աղօթից, ուսմանց և Աստուածահաճոյ գնացից ։

Հոգեբոյս Արհին Թադդէոս Արք Եպիսկոպոս զգացեալ զանհրաժեշտ կարևորութիւն վարժոցի միոյ 'ի պէտս հայ Օրիորդաց Ջուղայու, փութաց յուշ աՃեալ զայն կարևոր պարագայ Հայրենասիրի առնս, որ և անմիջապէս կամակատար լեալ Սրբազան Հովուապետին՝ բարեհաՃեցաւ վեհ ազգասիրութեամբ հաստատել 'ի Ջուղա դպրոց մի վասն կրթութեան հայ Օրիորդաց տեղւոյն։ Բարենախանձ հոգւով զգացեալ նորա յընթացս ուղևորութեան իւրում յԵրուսաղէմ, թէ մի 'ի գլխաւոր պատՃառաց յառաջադիմութեան ազանց յասպարիզի ուսումնասիրութեան համարի գոլ անշուշտ Տպարանն. Ծախեաց բաւական գումար և գնեաց զսար մի Տպարանի և առաքեաց 'ի Ջուղա՝ յԱմենափրկչեան Վանս, ուր թէ և երկար միջոց ապարդիւն մնաց այն և անգործ, բայց սիրելի է ինձ յիշատակել աստանօր զի 'ի ժամանել արդեան Առաջնորդին Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսի 'ի Ջուղա, մի 'ի նշանաւոր գործոց նորա եղև արդիւնաւոր առնել զայն Տպարան, ուստի և առ կենդանութեամբ իւրով Պարոն Մանուկն ըստ ըղձից իւրոց՝ արժանացաւ ականատես գոլ առա-



ջին խայրեաց և արգասեաց իւրոյ Տպարանին հրատարակութեամբ քանի մի դպրոցական մատենից 'ի պէտս մանկանց ազգիս։

Գլխաւոր առարկայ խօսակցութեան նորա և տաՃուն գաղափար էր նորա միշտ իղձ տեսանելոյ զյառաջադիմութիւն ազգային վարժարանաց, բարգաւաՃութիւն կրօնի և ազգութեան, հայրենասիրական բարեմիտ յորդորք, և առաքինազարդ վարուց նախանձախնդրութիւն։

Ի սփիւռս Հնդկաստանի սա և եթ էր մնացեալ 'ի հին աւուրց արանց բարեպաշտից, որ յօժարակամ մեծարէր զծէս և զկանոնս Հայաստանեաց Եկեղեցւոյ։ Սիրելի էր նմա միշտ հանդիսակից գոլ պաշտամանց սուրբ եկեղեցւոյն, բայց ծերութիւն նորա խոչ և խութ լինէր յաՃախ, որով պարտաւորէր երկիցս յամսոջ գնալ յեկեղեցի, և այն թէ քանի բարեպաշտական հոգւով և երկիւղածութեամբ, յանՀարիցն է ինձ 'ի բան բերել։ Թէ գործովք և թէ արդեամբք 'ի կատար հասոյց նա զպարտ իւր 'ի կենցաղումն, այո՛ փորձեաց զնա աշխարհ 'ի վերջին աւուրս իւր դառն արկածեօք, այլ նա գիտաց համբերատար հոգւով տանել ամենայնի։ Ընտրտունջ, և գոհ և բա-

ւարար կնքեաց զմահկանացու կեանս իւր 'ի 24 երրորդում փետրուար ամսոյ 'ի 1879 ամի 'ի հասակի 79 ամաց ։

Զկնի մահուան նորա կտակ նորա աւետեաց ազգին ուրախ իմն լուր, այն է աւանդումն կէս գոյից իւրոց 'ի կառուցումն հոգեւորական դպրոցի միոյ 'ի Ջուղա, և միւս կէսն 'ի պէտս Օրիորդաց դպրոցին ։ Այս և եթ մնայ ինձ 'ի նկատի առնուլ, զի 'ի տրիտուր գովանի վաստակոցն՝ անթառամ պսակաց յաւիտենականին եղև նա ակնկալու, և շնորհաց այնմ անսպառ ապէնխաղ գանձուց աղբերն, որ դէտակն կալեալ ականատես եղև նորին ազգասիրական, հայրենասիրական, բարեպաշտական և ազգի ազգի պերճ բարեմասնութեանց հանդիսից ։

Թող ուրեմն յիշատակ հայրենասիրի առն անմոռանալի մնասցէ և անջնջելի 'ի սիրտ մերոց համազգեաց, մանաւանդ նոցա՝ որ դաստիարակին 'ի կառուցեալ վարժարանի նորա ։

---



## Ի ՄԱՀ
### Աստուածասէրի և Ազգասէրի Պարոն Մանուչայ Յօրդանանեան

### ԵՂԵՐԳ

Ո՜վ որ ցանգ բարւոյն 'ի գիւտ եռան-
դեամբ միշտ յածեցար,
կաթոգին՝ նպատակ վեհ փառս հայ-
րենեաց անձին կալար,
Խանդ 'ի սիրտ յեռանդն հոգի յարդիւնս
ածեր ղհրաշալիս,
Վկայ Դպրոցն Օրիորդաց 'ի հոյլս ար-
դեանց բազմազգիս ։
Հանգիր' արդ, վեհազն հոգի, հանգիր՝
'ի սէրդ սիրեցելոյ,
Զերծ միանգամ 'ի վշտաց և արկածիցս
կենցաղոյ,
Թռիր յերկինս, յաւէրժածին Երանու-
թեանցն կայեան,
Ուր 'ի տրիտուր պատրաստին քեզ բո-
լորք վարդից անթառամ ։
Բայց զինչ այս հնչիւն ողբոց, որ տակաւ
գայ յունկն իմ ազգէ,

Աւասիկ սաւառնի գայ համակ 'ի Թուխս
Հայկազն հոգի,
Եղերերգէ հանուրց 'ի լուր և զՄանուկ
Որդանան,
Զայրն վեհ բարեպաշտիկ Հայկեան պարծանք 'ի Հնդկաստան։
Ո՛հ մեռաւ, գուժէ, միւս այլ փառաց
աղգի յուսոյ նշխար,
Բարձաւ 'ի ձէնջ մեկնեցաւ, լիք զՀեծուԹեանց զայս աշխարհ,
Աւա՜ղ մեռաւ բարեգուԹն, 'ի սուգ այրեաց և տնանկին,
Նա զնոցին սրբէր զարտօսր, հայր էր որբոց և հիքին։
Ո՛հ մեռաւ հայրենասէրն, քաջ խրախոյսն հայրենեաց,
Ձեռնտուն և խնամող վարժելոց և վարժարանաց,
Ո՛ քանի քաղցր էր նմին տալ քաջալերք յուսաբեկից,
Հեշտախօս յորդորս բարեաց, ով Թէ քանի և սիրալից։
Ո՛հ առ ում կարկառիցին այսուհետև ձեռք ապիկար,
Զի բարձաւ սլացաւ 'ի բաց փառք հայրենեաց և սատար,



Ոչ այնպէս շող արեգին ընդ համագոյս
շողշող ծաւալ,
Որպէս նորին գուԹ և խնամ զվշտազգաց սրտիւք սփռեալ։
Այսպէս ձեռն 'ի ծնօտի ողբայ ոգին Հայաստանեայց,
Եւ զայսոսիկ յեղյեղէ զողբս հանուրց 'ի լուր համազգեաց,
Ապա յաղատն 'ի Մասիս 'ի վեհավայր սար ցրտագին,
Մենացեալ նստի լռիկ շրջայածեալ զաչս կրկին։
Իսկ ոյք սոքա փայլ 'ի փայլ պարառուԹիւնք Օրիորդաց,
Դպրոցին են նորին սանունք, պար քընքուշ գեղաւորաց,
Դառնալի քան զամենայն սոքա ջայլից հարկանեն զողբ,
Զհասարակաց լան հօր զմահ, որ լիք զնոսա կարօտ և զորբ։
Այս զարգիս նաև գիտեմ 'ի դարս ապայս խումբ պարմանից,
Դրուատիս աղգասիրին վեր ընծայեն վեհ հանդիսից։
Զնա վեհանձն առաքինի գոչեն յաւէրժ վառք 'ի սէր։

Աւանդ տալով միմեանց 'ի պահ զանուն
Նորին ազգասէր ։
Իցէ՛ւ բերկրեալ վեհազն հոգի 'ի յօթեւանս
երջանիկ ,
Առ հայրենասէր սրտիս եղերգ բղխեալ
'ի բնէ անկեղծիկ ,
Այ՛ այ՛ հառաչանաց է այս ուղերձ
մտադիւր ,
գթոյ Նորին եւ երախտեաց տուր իս , խուն
ինչ տրիտուր ։

Երկնաներեալ 'ի 1879 ամի յորում
Կնքեաց Ղուկեանս Եւր ։



ՄՍ Հայագիտական գրադարան
MAL004499